Մամուլի հաղորդագրություն

Երևան, Ապրիլի 23, 2020

Վեոլիա Հայաստան

«Վեոլիա Ջուր»-ը կոչ է անում վճարումներն իրականացնել առցանց եղանակով

«Վեոլիա Ջուր»-ը շարունակում է գործել արտակարգ դրության պայմաններում: Ի հավելումն միլիոնավոր ֆիզիկական անձ հաճախորդների՝ մենք ծառայություններ ենք մատուցում նաև այսօր կենսական նշանակության ունեցող այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են հիվանդանոցները, սննդի մատակարարները և այլն: Սա պատասխանատվություն է, որ մենք շատ ենք կարևորում:

Ջրի մատակարարման համակարգը՝ պոմպակայանները և այլ ինժեներական ենթակառուցվածքները ապահովում են կայուն և որակյալ ջրամատակարարում բոլորիս համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն թվականի ապրիլի 22-ից բնակիչ-բաժանորդների համար կոմունալ՝ այդ թվում խմելու ջրի և ջրահեռացման ծառայության դիմաց վճարման պարտավորության կատարմանը խոչընդոտող ֆորս մաժորը համարում է վերացած, «Վեոլիա Ջուր»-ը հորդորում է իր բաժանորդներին կատարել վճարումները:

Միաժամանակ, գիտակցելով կորոնավիրուսով պայմանավորված պատասխանատվությունը, **«Վեոլիա Ջուր»-ը կոչ է անում պահպանել Ձեր և Ձեր ընտանիքի անվտանգությունը և մատուցված ծառայությունների համար վճարել՝ օգտագործելով առցանց և բջջային համակարգերը: Վճարելով մատուցված ծառայությունների համար՝ դուք միանում եք այսօրվա՝ արտակարգ իրավիճակում որակյալ ջրամատակարարում ապահովելու մեր ջանքերին:**

Էլեկտրոնային համակարգերով վճարումների հետ կապված հարցերի դեպքում կարող եք զանգահարել մեզ 080000-185 անվճար հեռախոսահամարով:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում երկրի անվտանգությունն ապահովելու գործում Ձեր ներդրման համար:

Կոնտակտներ

Վեոլիա Հայաստան
Մուրադ Սարգսյան, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ,
Հեռ՝ + 374 11.59 03 68,
Բջջ՝ +374 77.97 27 42
Էլ. հասցե՝ murad.sargsyan@veolia.com